

# Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես թաղմ. 1925, էջ 285)

## ՃԻԹ.

Ընդհանուրական թուղթս պիտի հետաքրքրէ գրութեան ձևին և արտայայտութեան կերպերուն համար:

[ . . . . ] Եկեղեցոյ, սեանդ շարժարտութեան [ . . . ] Ընտորի  
Տեանն Տեանն Մխիթարայ Արքայի և Աստուածարան Վարդապետի:

Ձգեալ քարտէզդ ուրախալից, որ վասն շնորհաւորութեան շնորհապայծառ և նշուազեղ ծննդեան Տեանն մերոյ յիսուսի քրիստոսի սիրով ընկալայ ի դեկտեմբերի 28. և ընթերցեալ ուրախ եղէ ոչ սակաւ. այլ արդ՝ ոչ ապաքնէ և անուանդ գերազանցութիւն, և աստուածաբանութեանդ քո համբաւ և կրօնիդ արփիածանանք և արփացընցուղ բարեվաշխութիւն և հրեշտակակերպ կենցաղաւարտութիւն, և յետին ժամանակս յարուցեալ լուսաւորութիւն տանն ողորմելի հայոց, անապարեալ ստիպեցէ զիս՝ զնոյնգունակն ողջոյն և սէր. և զշնորհաւորումս, պայծառութեանդ քո ընծայեալ մատուցանել. քանզի և սէրն մեր, որ հիմնեալ է ի մեզ եզականապէս, վասն որոյ միշտ զտիւ և զգիչեր հայցեմ ի Տեանն մերմէ յիսուսէ քրիստոսէ՝ զի գրեզ գեղբայրդ իմ գերազանցանք, և զվերապաւտուելի վարդապետս և զնորընծայ աշակերտս քո ամբողջ և անսասան պահեսցէ. և զքեզ՝ որ որպէս ի հինգ զմովսէս կացոյց ի մէջ ազգին իսրայելացոց. հանել քն ի յեզիպտոսէ յերծուածողութենէ. և ի նորս զլուսաւորիչն մեր սրբազան. դարձուցանել զազգն ողորմելի ի խաւարէ մուրումնեան. միշտ ի ձեռն զանազան անուշահոտ ծաղկանց բուրստանաց անթառամելիս և միշտ հաստաբոյրս, որք հանապազ զազգն լուսաւորեն, բարձր բազկաւ և հօր ձեռամբ իւրով կարողացուցէ և զօրացուցէ Ամէն:

Յամի Տեանն 1743

ի դեկտեմբերի 28

[ Ի Հոռով ]

Վրդանէս վարդապետ  
Իբր եպիսկոպոս

## ՃԼ.

Մեր ընթերցողին կը թողունք անդրադառնալ հետեւեալ ընդարձակ վաւերաթուղթին շահեկանութիւնը:

Նամակագիրը, Պետրոս Ա. Կաթողիկոս, մանրամասն կը խօսի երեք զվաւոր նիւթերու շուրջ, որոնք են. 1°. իր արկածալից ուղեւորութիւնը դէպ ի կ. Պոլիս.

1. Նամակիս վերին մէկ անկիւնը փրցուած ըլլալով՝ վերնագրին մէկ մասը կիսատ է, ինչպէս կէտերը ցոյց կու տան:

2°. Յանձնարարութիւն առ Մխիթար՝ շուղայեցի քահանայի մը նկատմամբ, որ վեհնետկէն անցնելով պիտի երթայ Հոռվմ. 3°. Յանձնարարութիւն մը իր անհաւատաբարիմ ուղեկիրը Զմմառեան Հ. Նիկողայոսի մասին:

Իսկ Պոլիս ուղեւորելուն նպատակը ուրիշ անգամ մ'ալ շեշտած էր արդէն այսպէս. « գի օգնեցից Աստուծով դարձման եկեղեցոյ և եղբարց և ինձ ֆարման ազաւտորեան ի յաքստանաց (1743 Օգոստ. 7. Գր. առ Մխիթար):

### Գերյարգելի Աբրահորդ Ողլուն և աստաքեական օրննոշրիսն

Յայտ առնեմ մեծաւ սիրով վերոյ գրեցեալ ճշմարիտ և ամենայարգելի Նղբայրու թեանդ զորպիսութենէ տառապելոյս. զնոյն կրկնեմ յաւելով որք պատահեցան զկնի. վասն զի ոչ ընկալաւ պատասխան առաջնոյն: Ի ալիկօռնաու եւս գրեցի զիբ, ետու ստեփան վարդապետին ներ յաւուր չուեցման իմոյ. զի խրատ խնդրեալ էի յառաջադէմ եղբայրութենէ և ի սոցանէ եւս ոչ (ոչ) ընկալաւ պատասխան: Զկնի հասանելոյս ի վանքն յիսուսի փրկչին, յետ բազում նեղութեանց և պատահանց, որչ և առողջ ընդ իս եղեւ լովք մեծաւ հանդիսիւ, ասացի այս է հանգիստ իմ. տալով միշտ գոհութիւն ստեղծողին իմոյ. բայց գտի ներ երկրիս հանքաւ իմի, թէ սուրբ փափն Ե հազար ոսկի պարգևեր է ինձ. և ոմանք չար բռնաւորք խնդրեն զկէսն և ոմանք զմասն ինչ. յոյժ նեղութիւն եղև ինձ և տառապանք, պատասխան ամենեցուն թէ սուտ է, և նոքա ասեն թէ ի Հոռվայու գրեցին ի մեզ. զգիրն ոչ ցոյց ետուն: Աստուծով և քոյին սուրբ աղօթիւք զապաեցաւ. և այս սուտ հանքաւս ոչ գիտացի թէ յուստի ել. իսկ Բերիոյ Բ անգամ ֆարման հաւնեցին վասն աքսորման ժե՛ անձանց ներ ամրոցին յատանաւ. ողորմութեամբն Աստուծոյ ոչ ոք աքսորեցաւ. չար վարդապետն սըսցի էառ զամենայն արծաթեղէն անօթն Բ եկեղեցոյ և եղ ի գրաւի զի ի կատար հասուսցէ զչարութիւն իւր. և շատ դժբաւ ետ բռնաւորաց. ի գուր աշխատեցաւ, որ յառաջադէմ ատելի և անհաճոյ էր աստուծոյ. եղև իսկ յայժմ ատելի և անհաճոյ քահանայից և ամենից ժողովրդոց և մաշի բանդէ ի բանդ. և զիտաց թէ Աստուած զոյ իսրայէլի. իսկ քաղաքացիք ժողովեալ յղեցին ոմա առ իս և հարկաւորեցին զիս ստամպով վասն եկեղեցեաց և այլ իրաց, զի թագաւորն կալ լիաւսոց գրեաց առ հրեշտակն իւր, թէ հոգ տարցես վասն բերիացցոց որք պատկանին սրբոյ Հաւատոյ և դարձման եկեղեցեաց առ Հայոց յուղղափառսն. զի գրեցին սուրբ փափն և հայոց հաստատեցեալ պատրիարզն ի վերայ յայժմ իրաց. և ես յանձն առի վասն փառացն աստուծոյ և ի օգուտ միեռաւորաց, զնալ թագնալբար և աշխատիլ, առեալ ընդ իս զեկեալն ի Բերիոյ, և մին քահանայ. ելի ի վանքէն ապրիլի 12 ի կերպ աղքատի մուրացիկի, պատառասու և հին հանդերձիք, և ընկերքն իմ որպէս վաճառաւ. կանք և փառաւոր ի կերպ յոյժ անձնաթի և մտաք ի նաւ առ ի զնալ ի Դիմեաթ. և եղև մրրիկ և ալէկօծում յոյժ սաստիկ ներ ծովու, ի մէջ յազայոյ և ճաֆայու փոքր նաւակն ընկեցին ի ծովն և ծովն զարկաւ և կոտորեաց զնաւակն, զի կամէին նաւաւարգն փախլիլ ի ցամաք զի մերձ էր. այլ աստուած ոչ կամեցաւ և պատառեցան ամենայն առազաստք նաւին մինն զկնի միւսոց. և Բ խարիսդ ընկեցին զի մի գնացէ ի ցամաքն. յայժմամ լցաւ նաւն շրոջն յալեաց և ամենեքեանս որպէս զձկունս ի ներ շրոյ կայաք. կոտորեցան պարանք երկաթիք. թողին ներ ծովու և փախեան. և յետ սակաւ ժամանակի հասան նաւահագիտս մի անմարդարնակ և անվայելուշ. օթեցան ի նոյն գիշերն և առաւօտն ելեալ զնացին ի հայֆա, և ելաք ի ցամաք և յանդ զտաք զոմն ծանօթ աստուծով յոյն ազգաւ. ԺԲ ձիաւոր հեծեալ և Բ ուղտ բարցաք ցամաքով, իսկ երկուղն՝ զողոց և աւազակաց մաշեաց զմեզ մինչ որ հասաք ի յազի. ասեմք աստուծոյ գոհութիւն. և յանդ մնացաք ԺԳ օր: Դարձեալ մտաք ի յալ նաւ կրկին չուեցաք ի Դիմեաթ

և տեսաք ներ ծովու մալթացիք և յոյժ երկիւղեալ լցան նաւարարքն, վասն զի յոյնք էին, բայց ոչ ինչ փասեցին. յոյժ պատիւ արարին տառապելոյս, յետ ընթեռնելոյ զաւսնայն վկայականս. իսկ կամօքն աստուծոյ հասաք ի Գիմեաթ յաւուր Համբարձման տեառն մերոյ յիսուսի քրիստոսի. պատարագ հռչակեցի զի ի Գիմեաթ եղեալ եղբարքն յոյնք են, հայ ոչ գոյ. միւս օրն ըմբռնեաց զիս յտեցի ցաւն ըստ սովորութեան Ե՛ր օր հազիւ կարացի յտոին կհաւ, և յունեցի առ յաղէքսանդրիս, և յանդ գտի Ձի գինուրդ որք գնան ի յեգիպտոսէ առ ի Բաբելոն. ոչ ոք կարէ ելանել ի տանէն վասն որոյ երկիւղ է նոցա. իսկ յանդ գտի մեծ ահագին նաւ մի թուրքաց. և առի զամառայ մի. այսօր ի՞նչ օր է չունի քամի և եղանակ որ ելանէ ի նաւահանգստեան յուսալով յաստուած գնամ և զոր ինչ պատահեսցի վասն փառացն աստուծոյ կրնմ. խնդրեմ յեղբարութեանդ ինչ յոյժ աղերսանօք վասն սիրոյն աստուծոյ, զի մին անգամ պատուիրեսցես Հասարակաց սրբոյ կրօնիդ որ ի խորոց սրտէ յաղօթս արասցեն յատկապէս վասն տառապելոյս, զի մեծ սէր և հաւատ հանդերձ յաներկբայ յուսով յունիմ ի վաղուց հետէ և գիտեմ փորձիւ. զի բերանք հասարակ կրօնաւորաց մերձ են ի յաղանշս աստուծոյ, ինչոքեսցեն ի յաստուծոյ զի կատարեսցի յիս և ինեւ բաբելոն գկանա աստուծոյ. իսկ անցեալ ամին ոմն քահանայ Ղուկասեցի գնայր ի Հոսմ, տեսի զիս ի մեծն յաղէքսանդրիս, անուն նորա տէր աստուածատուր որդի տէր յաղէքսանդրի, նորահաւատ և յոյժ շերտեալնդ. բայց լուա թէ ի Վէնէտիկ է. զի այսպիսի անձինք շուտով գայթակղին ի տեսութենէ ալլոց բանից. երկնչիմ, եթէ առ ձեզ է խրատեսցես զնա ի ժամանակիս յայսմիկ ներ պատերազմի. հայրն զորդին ոչ ճանաչէ թէ զնա ի Հոսմ լինի թէ ոչ գտանէ սէր և պատիւ զոր յունի ի մտի, կամ լուեալ է և դառնայ վիրաւորեալ և սառն սրտիւ և այլն ըստ խղիւղագոյն խոհեմութեան Հօրդ. Դարձեալ վասն մեր Հայր Նիկողոսին կողմանէն որ ի յալիկօռնա բաժանեցաւ յինչն անհնազանդ և ապստամբ գտաւ կրօնին և յուխտին. ն ամ յեգիպտոս եկաց և ի յայս միջոցիս Գ ի ձ մարչիլի ապրանք առեալ է. երկուց վաշտականաց և յղեալ առ հայր իւր ի լեռան քսելովան. և ի վաղշանի փախեալ յեգիպտոսէ, պառառելով թէ յեգիպտոս զոյ յեգիպտոս և առի զինքն ընդ իս ի Հոսմ. ոչ պատմեաց ինձ և ոչ յունեք յեղբարց. զիր էկ ինձ ի Հոսմ Գ անգամ ցոյց ետու նմա, ուրացաւ և ասաց թէ ես ուխտեալ կրօնաւոր քահանայ եմ, սուտ գրեն ի վերայ իմ թէ հայրս առնաւոր յունի ընդ նոսա, իմ հետ ինչ ունին բան. և ես հաւատացի նմա. և իբրեզ գիտաց ի յալիկօռնա թէ զնամ ի կողմն եգիպտոսի երկեալ ի զնալ ընդ իս. և յայնժամ յայտնեալ զանհնազանդութիւն իւր առաջի սահակ, զինչոս եպիսկոպոսեց. ստեփան վարդապետն և տէր յակորն ներկայ էին. յայնժամ եկի յաստեմարիտ վճռեցի զի տեսի զձեռաց զիրն որ ինքն առեալ և ոչ տեսեալ են զհայրն իւր. ինչորեն յինչն և հասարակաց զորամ. նախատինք և այպն եղեաք դրեաց մերոյ. մինն յոյն է պարտաւէրն իպրահիմ խլաթ կոչեն. և միւսն ֆոանկ է և յունին վկայք. զի յառաջալուծեմ զերեցի Հայրութեանդ վասն անհնազանդութեան և ապստամբութեան ապերախտ հայր Նիկօլին, զի խրատեսցես եթէ գայցէ ի Վէնէտիկ. զի ես յարգելի ի քա. հանայական գործոց զի գիտացցէ հայրութիւն քոյ, մինչև դարձցի. ամենայն գործոց չարեաց դարձցի և հատուցէ զպարտոս իւր հոգևոր և մարմնաւոր. լուա ի յոմանց թէ զնալ կամի ի վէնէտիկ. եթէ գայցէ ինչորեմ վասն սիրոյ յղբարութեան խրատեսցես զքո հայրական սովորութեամբ՝ կամ զերեսն նմա ի յալիկօռնայ ի փառս աստուծոյ զի շահեսցի. եւ եղբարութիւնդ առցես ի քրիստոսէ զվարձն յախիսնականս. եւ ալ փոր. ձութիւնք և պատահմունք զանազանք. ներքոյ և յարտաքոյ աստուծոյ գոհութիւն. խտեմ լիցի ոչ ձանձուրութիւն սրբոյ անձիդ. երկարութիւն գրիս զի ի ներ մահնի գրեցի Ով միթիթարութեան սրտի իմոյ տրամեցելոյ. ներ յայսմ կենի և տուն խորհրդոյ փառք գոհութիւն պատիւ և շնորհակալութիւն պարգեւողին շնորհաց. և յանձնեմ զեղբայրդ իմ ի նոյն տուօղին շնորհաց զի երեքեցէ զվաղշանս և զկենսն մեր ի ներքոյ շնորհան. և օրհնեալ հասարակութիւնն յարգեմ ողջունեմ մեծաւ սիրով, և ցօնեմ ի վերայ հոգոց և մարմնոց իւրաքանչիւրոց աստիճանի և շնորհի զօրհնութիւն առաքելական կրկախառն փարմամբ և պարարող սիրով. և մնալով միշտ կարօտ մարմնաւորի տեսութեան և վեր.

Հացուցանելով զբանս կրկին օրհնութեամբ, և Ձեռք մխտ պատրաստական ծառայ յար-  
գելի եղբայրութեանդ:

Ամի Տեառն 1744

Դեկտեմբերի 3

Ի մեծն յաղէքսանդրեա

Աբրահամ Պետրոս

Պատրիարք Կոնստանդ

Ի սուրբ Գահէն Ի վերայ հայոց յուղղափառաց

Ողջուն և օրհնութիւն մեր սիրելի պարոն խաչիկին....

## ՃԼԱ.

Իբրեւ նմոյշ ժամանակակից Մահառահայ լեզուին՝ հետաքրքրական կը համա-  
րինք հետեւեալ նամակը, որ պարունակութեան տեսակէտով ալ զուրկ չէ արդէն  
կարեւորութենէ:

Օր. Եղ. Յս. Քս.

1744 Նոյեմ. 30. Էլիզաբէդն

Փերչարգեղի Տեառն Տեառն Մխիթար Հայր Աբրահայի մերոյ, և բնառ միեալաբնիցն  
մեր ցանկալի հոգեւոր հարանց, խոնարհական սիրոյ, ողջուն կու մատուցանեմք վերոյ  
գրեցելոցն ամենից

... Բրական կայ մէկ պատկեր մեծ պղնծէ, որ է 70 խանթըրէ ծանտրութիւն  
նորայ և է պատկեր սրբուն օհաննէս նէքովձէնի. իրաւ որ ես միգաւորս ալ քալիլ իմ  
բրական, և զայն մեծ անվանի ջուրն անցիլ իմ, որոյ անունը մօլաւա կասեն, և զան  
պատկեր ջրին քնարն է, կարմուննին զլօխը. մայ վաղուց ժամանակէ մօռայցիլ իմ թէ  
որպիսի մեծ է: Նայ կասին թէ զան պատկերն աստուծոյ հրամանաւն նուն տեղն դառ-  
նուցած ըլլայ զղէմս զէպ ի իրեն եկեղեցին, և օլտրված ըլլայ պօյը ինքն ըսդ ինքեան  
այսինքն թէ բրուսն գալօվ զանդիւնէն, որմէ երեսն զէպ ի բրուսին կանքնած ըլլայ նայ  
պատկերն զերեսն դառնուցած ըլլայ բրուսէն և բրուս գալօվ և առիլ է զբրակայ մեծ  
անվանի քաղաք և կօշօպտիլ է զամենայն զանծն և մալն և զամենայն անօթ ոսգէղէն  
և արծթեղէն բառնալով 100 արապայ մն և զնածիլ է. և էտէն կրկին զնածիլ ին  
ծանտր հեծել և հասիլ ին զբրուսն ու շառ մարդ կօրիլ է և զամենայն աղէկն ետ դառ-  
նուցած ըլլան....

(Շարունակելի)

Պ[ետրոս] Քէլիեան

Հ. ՂԵՌՈՒ ՏՅՏԵԱՆ

Սուգ մեծ, սէր անբուսալի, սի անցորդ,  
Երածիկ յայս վէժ. — ԼՈՒՅՆԱՆ ԶԱՄՅԱՆ օրիորդ.  
Բիւզանդաբոյս բողբոլ բեկեալ ի կօրկիւր.  
Փարելի բնոյթ և երևոյթ շնորհաբեր.  
Լըսէ յանվերլ շառառ ալեաց և ըրիման՝

Ըզմշտամուռն զօրովադին կառաշանս  
Համակարիք հզօրն և քեռ սրտազող,  
Որք յաւանդել զնոյն ընտանի՝ յօտար հող,  
Յամեն պայծառ թաղիկ յամեն աղաւալոյս  
Ձերեանց Լուցեալ զնքնին զուգի և զայս կոյս:

ՏՈ. 1849 ՅՈՒ. † 1880, Ապրիլ 14.

(Տպագրագիրս շարացրուած է Հ. Ալիշանի Օր. Չամբեանի դամբանին համար որ Փորժոռն մէջ է):